

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան, Գ Լուսավորչի 13 և 13/1

հեռ. (+374 12) 22 22 22, էլ. փոստ՝ ashb@ardshinbank.am

[Ինտերնետային կայք՝ www.ardshinbank.am](http://www.ardshinbank.am)

Հաշվետվություն թիվ 06, 19.04.2022

«Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի 2022 թվականի ապրիլի 15-ի տարեկան ընդհանուր ժողովը թիվ 2022-1-2 Լ որոշմամբ որոշել է՝

1. «Արդշինբանկ» ՓԲԸ 2021 թվականի ֆինանսական հաշվետվությունների համաձայն 13,653,951,000 (տասներեք միլիարդ վեց հարյուր հիսուներեք միլիոն ինը հարյուր հիսունմեկ հազար) ՀՀ դրամ գումարի «Արդշինբանկ» ՓԲԸ զուտ շահույթը (հարկերի նվազեցումից հետո) բաշխել հետևյալ կերպ՝

1) 682 697 550 (վեց հարյուր ութսուներկու միլիոն վեց հարյուր ինսունյոթ հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով, որը կազմում է 13 653 951 000 (տասներեք միլիարդ վեց հարյուր հիսուներեք միլիոն ինը հարյուր հիսունմեկ հազար) ՀՀ դրամ զուտ շահույթի 5% (հինգ տոկոսը), կատարել պահուստային ֆոնդի (գլխավոր պահուստի) համալրում,

2) 1 000 000 000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամը բաշխել «Արդշինբանկ» ՓԲԸ հասարակ բաժնետոմսերի տիրապետող բաժնետերերին որպես շահութաբաժիններ՝ ըստ «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրական կապիտալում նրանց ունեցած մասնակցության համամասնությունների:

Սույն ենթակետով սահմանված շահութաբաժինները բաշխել սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ՝ պայմանով, որ դա չի հանգեցնի «Արդշինբանկ» ՓԲԸ կողմից օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտման:

Վճարումներն իրականացնել օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտման բացակայության հանգամանքը «Արդշինբանկ» ՓԲԸ ֆինանսական տնօրենի կողմից հաստատելուց հետո:

Սույն ենթակետում նշված շահութաբաժինների վճարումն իրականացնել համապատասխան գումարները «Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի բանկային հաշիվներին փոխանցելու կարգով,

3) 2021 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով «Արդշինբանկ» ՓԲԸ տեղաբաշխված «A» դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարել՝ հաշվարկված համաձայն «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրության 91.3. կետի 1-ին ենթակետի:

Սույն ենթակետով սահմանված տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել մինչև 2022 թվականի մայիսի 31-ը ներառյալ՝ համապատասխան գումարը «Արդշինբանկ» ՓԲԸ «A» դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ բանկային հաշվին փոխանցելու միջոցով,

4) մնացած գումարն ուղղել «Արդշինբանկ» ՓԲԸ «Նախորդ տարիների շահույթ/վնաս» հաշվեկշռային հաշվին:

2.Տարեկան շահութաբաժինները վճարել Բանկի այն հասարակ բաժնետոմսերի և «A» դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերին, ովքեր ընդգրկվել են Բանկի համապատասխանաբար հասարակ և արտոնյալ անվանական բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերի ռեեստրներում՝ 2022 թվականի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ: